# Ընթացակարգ-քարտեզ

## «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար», «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմներով մեկ տարուց ավելի ժամկետով ՀՀ ներմուծված ապրանքների մաքսային ռեժիմի ժամկետի երկարաձգման թույլտվության ստացման վերաբերյալ

### 1

Համապատասխան մաքսային ռեժիմով ապրանքի (ապրանքների) բացթողումը մեկ տարուց ավելի ժամկետով երկարաձգելու նպատակով **թույլտվություն** ստանալու համար ապրանքներ տեղափոխող անձը կարող է դիմել, եթե ապրանքը (ապրանքները) արդեն իսկ համապատասխան մաքսային ռեժիմի շրջանակներում գտնվում է(են) ՀՀ մաքսային տարածքում (տարածքից դուրս)՝ ունենալով համապատասխան մաքսային ռեժիմի համար մինչև մեկ տարի ժամկետով **թույլտվություն**

### 2

ՀՀ կառավարության լիազոր մարմնի՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար», «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմներով ձևակերպված ապրանքների համար տրվում է եզրակացություն՝ հայտարարատուի խնդրարկած, սակայն ներմուծման պահից մեկ տարին չգերազանցող ժամկետի հիման վրա: Եթե սկզբնապես խնդրարկված ժամկետը մեկ տարուց պակաս է, ապա մաքսային մարմինը հայտարարատուի դիմումի հիման վրա երկարաձգում է այդ ժամկետը ներմուծման օրվանից մեկ տարին չգերազանցող ժամկետով:

### 3

Եթե անհրաժեշտություն է առաջացել «Ժամանակավոր ներմուծում/արտահանում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմիով ՀՀ ներմուծված/արտահանված ապրանքների մաքսային ռեժիմների ժամկետը երկարաձգելու, ապա հայտարարատուն նշված **թույլտվությունը** ստանալու համար **դիմումը** ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացնում տվյալ ապրանքի՝ համապատասխան մաքսային ռեժիմի թույլտվության **ժամկետը լրանալուց առնվազն 2 ամիս առաջ**

### 4

Դիմումին կից ներկայացվում են՝

ա) ապրանքներ տեղափոխող անձի լրիվ անվանումը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, հայրանունը, ազգանունը

բ) ապրանքի անվանումը, ծածկագիրն ըստ ԱՏԳ ԱԱ-ի

գ) համապատասխան մաքսային ռեժիմի համար թույլտության խնդրարկվող ժամկետը

դ) հիմնավորում՝ մեկ տարուց ավելի ժամկետով համապատասխան մաքսային ռեժիմով հայտարարագրման վերաբերյալ ( աշխատատեղեր, իրացում, հարկեր և այլն.... )

ե) մաքսային մարմինների կողմից վավերացված մաքսային հայտարարագրի պատճենը

զ) համապատասխան պայմանագրի պատճենը (առկայության դեպքում)

## 5

ՀՀ կառավարության աշխատակազմ հայտարարատուի կողմից ներկայացված դիմումի (կից փաստաթղթեր) հիման վրա ՀՀ կառավարության լիազոր մարմինը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մշակում և շրջանառության մեջ է դնում համապատասխան մաքսային ռեժիմով ապրանքների մեկ տարուց ավելի ժամկետով բացթողման թույլտվության տրամադրման մասին **ՀՀ կառավարության որոշման նախագիծ /այսուհետ՝ Նախագիծ/**

## 6

**Նախագծի՝**

**ընդունման** դեպքում վերադաս մաքսային մարմինը **երկարաձգում է** տվյալ ապրանքի (ապրանքների) համապատասխան մաքսային ռեժիմով նախատեսված ժամկետը՝ մինչև ՀՀ կառավարության սահմանած ժամկետի ավարտը

## 7

**Նախագծի՝**

**չընդունվելու** դեպքում ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը **մեկ շաբաթվա ընթացքում** տեղեկացնում է հայտարարատուին: